

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ԱՆՎԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Նայերենը հայրկանշվում է բառակազմական միջոցների և եղանակների հարստությամբ, նոր բառեր կերպելու բացառիկ ճկունությամբ. սա հայերի փառք է: Բառակազմական փոփոխությունից արգասավոր բազմաթիվ արմավներ ունենք, որոնցով հարյուրավոր բառեր են կազմվել (և շարունակում են կազմվել), ինչպես՝ *զիր, հող, ջուր, ցուն* և այլն: Արարողողականությամբ, այսինքն՝ նոր բաղադրությունների հիմք դառնալու հայրկանիշով հասարակ անուններին զգալապես զիջում են հայրով անունները (անձնանուն և փեղանուն), չնայած որ դրանց մեջ էլ կարելի է առանձնացնել այնպիսիք, որոնք առանձնանում են մյուսներից՝ բնութագրվելով բառակազմական մեծ ներունակությամբ¹:

Այս փոփոխությունից արարողողական է նաև *Մեսրոպ Մաշտոց* անունը: Նայոց գրի արարչի, հայ դպրության և ինքնություն գրականության հիմնադրի, թարգմանչական հզոր շարժման սկզբնավորողի և Նայասարանյայց Առաքելական Եկեղեցու փոնելի սրբի՝ Մեսրոպ Մաշտոցի անվան բաղադրիչներով մի բանի փասնյակ բառ է սրելով: Ի փոքրություն բառակազմական հիմք դարձած մյուս անձնանունների՝ այս դեպքում յուրահայրությունն այն է, որ բառակազմիչ արժեքով հանդես են գալիս անվան երկու բաղադրիչներն էլ:

Առանձին քննության նյութ կարող են դառնալ այդ բառերի կազմության ժամանակը, բառակազմական կաղապարները, բառերի իմաստները, նորակազմությունների հեղինակների հարցը, բառերի գործածության ոլորտները և այլն (դրանց մենք կանդրադառնանք առաջիկայում): Այժմ մեզ հետաքրքրում է *Մեսրոպ Մաշտոց* անվան բաղադրիչներով կազմված բառերի ներկայացումը հայերենի փոքրաբանական բառարաններում, ուստի կփորձենք պարզել այդ բառերի բառարանային մշակման ընդհանուր պարկերը:

Նոր և Առնուն Նայկազյան, ինչպես նաև գրաբարի մյուս բառարանները (այդ թվում՝ նորահայր բառերի) *Մեսրոպ Մաշտոց* անվան բաղադրիչներով բառեր չեն արձանագրել: Այդպիսիք չկան նաև Ս. Գաբամաճյանի և այլ բառարաններում:

Մեսրոպ Մաշտոց անվան բաղադրիչներով կազմված բառերից առաջին արձանագրումը, ըստ մեր ունեցած բառարանային փոխալների, կարարել է Սյր. Մալխասյանցը: Նրա բառարանը ունի միայն *մեսրոպեան* ածականը՝ «Մեսրոպ Մաշտոցին յափուկ, վերաբերել» բացառությամբ, ինչպես նաև *Մեսրոպեան այբուրեն* բառակապակցությունը²: *Մաշտոց* բաղադրիչով կազմված բառեր այդ բառարանում չկան:

1 Տե՛ս, օրինակ, Դ. Գյուրջինյան, Քրիստոս անվան բառակազմական արժեքը հայերենում («Էջմիածին» հանդես, 1992, ԺԲ., էջ 50-56): Քրիստոս բաղադրիչով կազմվել են ութսունից ավելի հայերեն բառեր:

2 Սյր. Մալխասյան, Նայերեն բացառական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 307:

Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի կազմած բառահարոր բացառական բառարանում *Մեսրոպ* հիմքով գրանցվել են արդեն *մեսրոպագիր, մեսրոպանիշ, մեսրոպասրատ* բառերը, ինչպես նաև վերևում հիշատակված *մեսրոպյան*-ը³: Այսպես *Մաշտոց* բաղադրիչ ունեցող բառեր չկան:

Մեսրոպյան բառի բացառությունը, բնականաբար, Մալխասյանցից շարքերը չէր կարող լինել՝ «Մեսրոպ Մաշտոցին հարուկ, վերաբերող, Մեսրոպի»: Միանգամայն ճիշդ է *Մեսրոպի* սեռական հոլովածի ներմուծումը բացառության մեջ, քանի որ *-յան* վերջածանցով ածականը և սեռական հոլովածներ հոմանիշ են առնասարակ: *Մեսրոպասրատ*-ը բացառվում է «Մեսրոպի կողմից ստեղծված, մեսրոպյան տառերով գրված (հայերեն տառերի մասին)», *մեսրոպագիր*-ը և *մեսրոպանիշ*-ը հղվում են *մեսրոպասրատ*-ին: Միայն *մեսրոպանիշ* և *մեսրոպասրատ* բառերի համար բնագրային օրինակներ կան (մամուլից նշումով):

Նարկ է նշել, որ բառարանը կազմելու ժամանակի մամուլի և գեղարվեստական ու գիտական գրականության էջերում *մեսրոպագիր* և *մեսրոպյան* բառերի գործածության բնագրային օրինակներ հնարավոր էր գտնել (հարկապես որ 1962-ին մեծ շուքով նշվել էր Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, և անդրադարձներ էին եղել գեղարվեստական սրելոձագործություններում, գիտական և այլ պարբերականներում, գիտահրապարակախոսական խոսքում): Ահավասիկ՝ Նայ ժողովուրդն այսօր *Մեսրոպագիր* հայերենով զարգացնում է իր մշակույթը (Գուրգեն Սևակ)⁴: Ես աղ թերթերեն բան մը չեմ հասկընար,- շարունակեց նորեկը,- ... *Մեսրոպյան* ուղղագրությունը այլանդակված կրեսնամ հոս (Ալեսի Բակունց): ... և մուրքի կամարի վրա՝ վիմագիր հին արձանագրությունը՝ *մեսրոպյան* երկաթագրերով (Նրաչյա Բոչար, Ժամանակներ): Նրանց վրա փորագրված է *մեսրոպյան* այբուբենը (Գրական թերթ, 26.03.1955): Արքահամյանը խոսում է մեսրոպյան երկաթագրերի առանձնահատկությունների մասին (Բանվոր, 06.08.1959) և այլն:

Էդ. Աղայանի բացառական բառարանը ակադեմիականում գերելովածներին ավելացնում է միայն *մեսրոպաշունչ* բառը՝ «մեսրոպյան ոգով, ուղղագրության և այբուբենի մեսրոպյան սկզբունքներին համապատասխանող» բացառությամբ⁵: *Մեսրոպագիր*-ը բացառված է իբրև «Մեսրոպյան տառերով գրված»: *Մեսրոպասրատ* բառն այսպես ներկայացված է իբրև բազմիմաստ՝ «1. Մեսրոպյան տառերից բաղկացած, 2. մեսրոպյան տառերով գրված»: *Մեսրոպյան* բառի բացառությունը նախորդներից տարբեր է՝ «Մեսրոպ Մաշտոցի սրելոձած՝ մշակված՝ հիմնադրած» (*մեսրոպյան այբուբեն՝ ուղղագրություն*): Բառի իմաստային կառուցվածքի մեջ տեղ չի տրվել *Մեսրոպի* հոլովածին, որը արևմտում ենթ ակադեմիական բառարանում: Էդ. Աղայանի կազմած բառարանում ևս *Մաշտոց* բաղադրիչ ունեցող բառեր չկան:

3 Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացառական բառարան», հ. 3, Երևան, 1974, էջ 521:

4 Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոցը որպես իր դարաշրջանի հանճարեղ արքայադպր / Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1962, հ. 5, էջ 12: Մյուս օրինակները՝ ԱՐԵՎԷ-ից (Արեւելահայերենի ազգային կորպուս), www.eanc.net:

5 Էդ. Աղայան, Արդի հայերենի բացառական բառարան, Երևան, հ. Բ, 1976, էջ 999:

Արեւմտահայերենի բացառական ծավալուն բառարաններից մեկում գրանցվել են *մեսրոպագիր*, *մեսրոպաշունչ*, *մեսրոպապատ* և *մեսրոպեան* բառերը⁶, այսինքն՝ վերոհիշյալ բացառական բառարանների համեմատությամբ բառային նոր միավորներ չեն ավելացել (նույնիսկ *մեսրոպանիշ*-ը դուրս է թողնվել):

Ակնհայտ է, որ *մեսրոպապատ* բառի բացառությունը բխում է Էդ. Աղայանի բառարանից. «1. Մեսրոպյան փառերէ բաղկացած, 2. մեսրոպագիր»: *Մեսրոպեան*-ի պարագայում լավագույնս հաշվառված է հայաստանյան բառարանների փորձը՝ «1. Մեսրոպ Մաշտոցի վերաբերեալ, 2. Մեսրոպ Մաշտոցի սրեղծած՝ մշակած (այբուբեն, ուղղագրութիւն)»: Ընդ որում միայն այս բառարանում է բառը բազմիմաստ դիտվել: Ներառյալ բառերի է, որ *մեսրոպագիր* բառի բացառության մեջ («մեսրոպեան՝ մաշտոցեան փառերով գրուած, մեսրոպապատ») կա *մաշտոցյան* բառը, սակայն այն որպես գլխաբառ չի ներկայացված:

Փաստորեն հայերենի ընդարձակ բոլոր բառարանները չունեն *Մաշտոց* բաղադրիչով կազմված բառեր, թեպետ, օրինակի համար, *մաշտոցյան* ածականը վաղուց ի վեր գործածության մեջ է ինչպես գիտական, այնպես էլ գեղարվեստական գրականության և հրապարակախոսության լեզվում: Այսպես, *Մաշտոցեան* լեզուն (հ. Նովսելի Գաթրըճյան): Մի՞թե այդքան անհոգի են *մաշտոցյան* գրերը (Ավսել Բակունց): Դժվար թե նույնը եղած լինե՞ր *Մաշտոցյան* շրջանում (Մանուկ Աբեղյան): *Մաշտոցյան* նշանագրերով 1500-ից ավելի փառքներ հայ ժողովուրդը գրում և սրբեցնում է («Դիտեր կանչ, 16.02.1961): ... վարժվեցին *մաշտոցյան* փառերի գրությանը և հեզեցին «այբբեն-գիմ...» (Պարույր Սեւակ): Ժողովածուն ընդգրկում է *մաշտոցյան* փառաբանին նվիրված նստաշրջանում կարդացված զեկուցումները (Երեկոյան Երևան, 28.05.1964): Մեր գիտնականները Ռայխսպագի պատերի խաղաղական մարդու իրավունքով գրեցին *մաշտոցյան* փառերը (Գյուղարկուն, 08.03.1967)⁷:

Մեսրոպյան բառը քնդ է գրել Մովսես Խորենացու «Պարմունիս Նայոց» երկի համաբարբառում՝ *Մեսրոպեան նշանագիրք* գլխաբառային բառակապակցությամբ («Յաղագս Մեսրոպեան նշանագրացն» վերնագրային կիրառության հիման վրա), ըստ այդմ էլ՝ Բերթոլանդի երկի հաճախականության բառարանում⁸:

Մեսրոպ Մաշտոց անվան բաղադրիչներով կազմված բառեր հանդիպում են նաև այլ, մասնավորապես հեղինակային (կամ գրողի) բառարաններում:

Մեսրոպյան և *Մաշտոցյան* բառերը քննում ենք Պ. Սեւակի չափածոյի բա-

6 Նայոց լեզուի նոր բառարան, հ. 2, աշխատասիրեց՝ Արարաշէն Տէր Խաչատրեան, Պէյրոթ, էջ 158:

7 «Տանդէս ամսօրնայ», 1913, էջ 719-723, *Մանուկ Աբեղյան*, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը / Մեսրոպ Մաշտոց (հոգվածների ժողովածու), Երևան, 1962, էջ 266, *Պարույր Սեւակ*, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1974, էջ 170 («Թղի դեմ՝ գրից» վերնագրով զեկուցումը առաջին անգամ տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրի 1962 թ. 5-րդ համարում): Մյուս օրինակները՝ ԱՐԵՎԻԿ-ից, www.eanc.net:

8 «Նայկական համաբարբառ 7», Մովսիսի Խորենացու Պարմունիս Նայոց, հ. 2 (կազմեցին Օ. Մ. Խաչատրյանը, Ա. Գ. Բաղդասարյանը), Երևան, 1976, էջ 401: Օ. Մ. Խաչատրյան, Մովսես Խորենացու «Նայոց պարմոյան» հաճախականության բառարան, Երևան, 1986, էջ 161:

ռարանում⁹: *Մաշտոցյանը* միավորը բառարանում հայտնվել է հերեյալ կիրառության հիման վրա.

Եվ մեր հոգևոր թագավորության
գահին բարձրացող ամեն թագավոր
Ծովեց նույն քնից, նույն ցեղից սերեց
Եւ պարվով-փառքով-վեհությամբ կրեց
Նույն քոհմանունը՝

Մեսրոպ-Մաշտոցյանը...

(Պարույր Սեալ, Եւ այր մի՝ Մաշտոց անուն)

Մաշտոցյանը գլխաբառից հղում է արվում *Մեսրոպ-Մաշտոցյանը* կապակցությանը, որը, սակայն, իբրև գլխաբառ՝ բացակայում է բառարանից (թերևս վրիպման հերևանք է): Բառարանում *Մաշտոցյանը* բառն օժտված է «հնացած» նշանով, որն արդարացված չէ, քանի որ ուրիշ՝ ավելի վաղ կիրառություններ հայտնի չեն: Իրականում բառը կազմվել է նման այլ կազմությունների համաբանությամբ (հմմտ. *Պետրոսյանը*, *Վասակյանը*, *մովսիսյանը*, *յուդայականը*, *նոյյանը* և այլն): «Մեսրոպ Մաշտոցի գարմը» բացարարությունը հստակ չէ: Նպարակահարմար կլիներ գրել «Մեսրոպ Մաշտոցի հերևորդներ (կամ հերևորդներ)» բացարարությունը:

Իսկ *մաշտոցյան* և *մեսրոպարառ* բառերը գրանցվել են բանաստեղծի աշխատությունների և թարգմանությունների բառարանում¹⁰: Այսպես էլ բառացանկից դուրս է մնացել *մաշտոցյանը* բառական միավորը, որը, ի պարբերություն չափաձոյում գործածված *Մեսրոպ-Մաշտոցյանը*-ի, արևում ենթադրաբար կիրառությամբ՝ Ահա թե ինչու Վարդանանց շարժման բուն հեղինակները *մաշտոցյանը* էին, Մաշտոցի ավագ ու կրպակը աշակերտները (Պարույր Սեալ, Թ-րի դեմ՝ գրիչ)¹¹:

Մեսրոպ Մաշտոց անվան բաղադրիչներով կազմված բառերի մի մեծ խումբ (12 բառ) կա Ամենայն Տայոց Գարեգին Ա. կաթողիկոսի երկերի բառարանում¹²: Բառերից 11-ը կազմվել են *Մեսրոպ* բաղադրիչով՝ *մեսրոպարար*, *մեսրոպարարառ*, *մեսրոպարույր*, *մեսրոպագիծ*, *մեսրոպածին*, *մեսրոպահեղ*, *մեսրոպահյուս*, *մեսրոպահունչ*, *մեսրոպանման*, *մեսրոպասնունդ*, *մեսրոպաստեղծ*, միայն մեկը՝ *Մաշտոց* բաղադրիչով՝ *մաշտոցաշունչ*: Եթե Պ. Սեալի երկերի բառարաններում ընդգրկվել են բանաստեղծի և գրականագետի գործածած բառերն առհասարակ, ապա այսպես հավաքվել են երջանկահիշարակ Տայրապետի արեղծած բառերը, ինչպես նաև արդեն գոյություն ունեցող այն բառերը, որոնք Վեհափառ Տայրապետը նոր իմաստով է գործածել: Այսինքն՝ սա հեղինակային նորակազմությունների բառարան է:

Բառարանում նշվում է բառը, նրա խոսքիմասային արժեքը, իմաստ(ներ)ը (այդ

9 Տե՛ս Արք. Պապոյան, Պ. Սեալի չափաձոյի բառարան, հ. 2, Երևան, 1982, էջ 126, 106:

10 Տե՛ս Արք. Տ. Պապոյան, Պ. Սեալի աշխատությունների և թարգմանությունների բառարան, Երևան, 1986, էջ 350, 361:

11 Պ. Սեալ, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 171:

12 Տե՛ս Տայրապետ Մեսրոպեան, Գարեգին Ա. Ամենայն Տայոց Կաթողիկոսի երկերի բառարան (Նոր բառեր և իմաստներ), Մոսկվա, 2000:

թվում՝ փոխաբերական), այնուհետև՝ բնագրային վկայություն(ներ)ը՝ սկզբնաղբյուրի հղումով: Այսպես, օրինակ.

ՄԵՍՐՈՊԱԾԻՆ, ած., Սուրբ Մեսրոպ Մաշտոց ծնած: Ինչո՞ւ գիս ծնաւ Ս. Մեսրոպ,-կ'աղաղակէ Նայ Գիրքը,- եթէ գիս պիտի լըին *մեսրոպածին* հայ ազգին այսօրոսան գաւակները (Նայ մարդը հայ գիրքին դիմաց, էջ 38):

Փառքորեն այս բառարանը *Մեսրոպ Մաշտոց* անվան բաղադրիչներով կազմված բառերի՝ բնագրային օրինակներով ներկայացման փասանկյունից ամենաընդգրկունն է:

Մի շարք դեպքերում բառարանագիրը նշում է մեկից ավելի իմաստներ, բայց ներկայացնում է բնագրային մեկ վկայություն: Օրինակ՝ ՄԵՍՐՈՊԱԾԱՐԱՐԱՆ, ած. 1. փխր. Նայախոս: 2. փխր. Նայ: 3. փխր. Նայկական ոգով աղեցուն: Կոչ կ'ողղենք մեր բոլոր հայկաթին, քրիստոսահաւար եւ մեսրոպաբարբառ ժողովուրդի գաւակներուն.... (Նոդ, մարդ եւ գիրք, էջ 65): Բառարանագիրը նշված երեք իմաստները հավանաբար վերագրելի է համարում Կոլյա բառին: Մեզ ավելորդ է թվում նաև *մեսրոպահյուս* «Մեսրոպ Մաշտոցի կողմից սրելով, հյուսված» բառի համար փոխաբերական «հայկական» իմաստի նշումը եւ այլն:

Նկատելի է բառաբանական պրպարումները որոշ սրբագրումներ մտցնելն այս կամ այն բառի հեղինակային պարկանկության հարցում: Այսպես, օրինակ, *մեսրոպաբոյր* (Ն. Մեսրոպյանի բացատրությամբ՝ 1. փխր. «հայախոս», 2. փխր. «հայ») բառը գործածել է երջանկահիշարակ Կաթողիկոսը («Ան-ժամանակը ժամանակին մէջ», Անթիլիաս, 1989). «Ես հո՞ն եմ՝ Օշականի մէջ, իմ արժանի առաքելային եւ իմ Անպարանին հայերէնախօսութեան սկզբնածին վարդապետին *մեսրոպաբոյր* ու յաւերժաբարբառ շիրմին վրայ», իսկ պոլսահայ բանաստեղծ Զահրապը ունի «*Մեսրոպաբոյր*» վերնագրով բանաստեղծություն (Կապույր երկիր, Սյամբուլ, 1971):

Գարեգին Առաքինի սրելով եւ գործածած այն բոլոր բառերը, որոնք ունեն *Մեսրոպ* եւ *Մաշտոց* բաղադրիչները, այս բառարանից ամբողջությամբ փրկափոխվել են հատուկ անունների մի բառարան¹³: Երջանկահիշարակ Կաթողիկոսի սրելով բառերից եւ ոչ մեկը, սակայն, այս բառարանում չի ներկայացվել բանաստեղծական օրինակներով, որն իբր սկզբունք է եղել բառարանը կազմողի համար (այդպիսիք կան միայն *մեսրոպաբառ*, *մեսրոպյան* եւ *մաշտոցյան* հանրահայր բառերի համար): Այնինչ բազմաթիվ կիրառություններ կան (հարկապես արեւմտահայերեն բանաստեղծական խոսքում), որոնք կարող էին փրկ գրել բառարանում: Այսպես, օրինակ՝

Մեսրոպահունչ.

Մեզմէ առաջ հնչած է մէկն այսքան ջինջ,

Այսքան քնքոշ *մեսրոպահունչ* հայ լեզուն (Մուշեղ Իշխան, Բու լեզուդ)¹⁴:

13 Տե՛ս Փ. Գ. Մեթիխանյան, Աստվածաշնչի եւ հայոց սուրբ անվանց բառարան (ըստ V-XX դարերի հայ բանաստեղծության), Երևան, 2001, էջք 326, 344-345:

14 Բանաստեղծությունը բանիցս հրապարակվել է նաև Նայասարանում. ԿԵՆ, օրինակ, «Միդոքսահայ բանաստեղծություն», Երևան, 1981, էջ 214, *Մուշեղ Իշխան*, Երկեր, Երևան, 1990, էջ 165:

Մեսրոպածին.

Այրն ու Բենը, Գիմն ու Դան

Թող անձրեւեն

Կոյս հողին վրայ

Նայ մանուկի կոյս սրտին

Եւ ծիլէ՛ր փան

Մեսրոպածին (Ժագ Նակոբյան, Օդար շեմին)¹⁵:

Եւ այսպէս շարունակ:

Կրկին առանց բնագրային օրինակների՝ բառացանկ են մտնել *մեսրոպանիշ* (հղում է արվում *մեսրոպասրտ*-ին) և *մաշպոցապաշար* «Մաշպոցին պաշտող, նրան նվիրված, 2. Մաշպոցի գաղափարներին հեղինակող» բառերը:

Ի դեպ, հայրուկ անունների այդ բառարանում կարող էին **Մեսրոպ** և **Մաշպոց** բաղադրիչներով կազմված այլ բառեր ևս զերելով՝ բանաստեղծական խոսքում գործածության նմուշներով հանդերձ: Ահավասիկ մեր ձևերի փակ եղած բազմաթիվ օրինակներից ընդամենը երեքը.

մեսրոպագուն, ամ., Մեսրոպից սերած

Այրեց մեր լեզուն,

Ոսկեղենիկը մեր *մեսրոպագուն* (Վահագն Դավթյան, Ասք Մաշպոցի մասին)¹⁶:

մեսրոպաշար, ամ., Մեսրոպի կողմից շարված:

Դարեր ապրած մագաղաթյա

Մեր մարյանների

Մեսրոպաշար, արդարախոս

Գրերն են անուշ (Գեղամ Մարյան, Տաղ Նայասարանին)¹⁷:

մեսրոպավանդ, ամ. Մեսրոպ Մաշպոցից ավանդված

Էջմիածինն՝ աղօթքի խո՛ւց

Խնկաբուրեան,

Օշականը՝ գրասեղա՛ն

Մեսրոպաւանդ (Ժագ Նակոբյան)¹⁸:

Մեսրոպ Մաշպոց անվան բաղադրիչներով կազմված բառեր սպասելի են նոր բառերի ընդհանուր բառարանում: Արդի հայերենի նորաբանությունների բառարանում մեզ հեղափոխող բառերից ընդամենը մեկն է արձանագրվել՝ *մեսրոպանուն*¹⁹: **Մեսրոպանուն**-ը նշված է իբրև բանաստեղծական բառ և բացատրվում է որպես «Մեսրոպի կողմից անվանված» և «Մեսրոպի անունը կրող»: Բառարանում փրկված բնագրային օրինակը վերաբերում է բառի առաջին իմաստին.

15 Ժագ Ս. Յակոբյան, Նայասրուի, Պէյրուֆ, 1970, էջ 39-40:

16 Վահագն Դավթյան, Երկեր, հ.2, Երևան, 1985, էջ 51:

17 Գեղամ Մարյան, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1982, էջ 126:

18 Ժագ Ս. Յակոբյան, շնվ. աշխ.:

19 Մ. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002, էջ 340:

Տառերը սիրուն ու **Մեսրոպանուն**

Կյանքի ճամփայի դաժան խավարում

Միշտ լույս են փալիս ու չեն սպառվում:

(Նայասարանի Նանրապերություն, 14.05.94)

Ձևոքի փակ բնագրային օրինակ չունենալով՝ բառարանագիրը ճիշտ կռահել է բառի երկրորդ իմաստը: Մենք այդ իմաստը գտնում ենք բանաստեղծական հերևյալ փողում՝

Ու շքերթը ձգվեց **մեսրոպանուն** մանկանց (Սոկրատ Խանյան, Մաշտոցն Արցախում):

Նորաբանությունների բառարան կարող էին մտնել **Մեսրոպ** և **Մաշտոց** բաղադրիչներն ունեցող մի շարք նոր բառեր կամ ավելի վաղ ստեղծվածներ, որոնք ցարդ որևէ բառարանում գրանցված չեն եղել: Այսպես:

մեսրոպագիտություն, գ. գիտություն Մեսրոպ Մաշտոցի, նրա կյանքի և գործունեության, հայ գրերի ստեղծման և հարակից հարցերի մասին

Մեսրոպագիտության հերթական խնդիրը պետք է համարել այն հարցի լուծումը, թե ... (Գուրգեն Սևակ)²⁰:

մաշտոցաբան, ամ., նույնն է՝ **մեսրոպաբան**:

- Իմ միակ երագանքն է սրանալ բարձրագույն կրթություն, խորանալ մայրենի լեզվի մեջ և **մաշտոցաբան** հայերենի գիտելիքները սերմանել օտար ափերում...., -ասում է Մարիամը (Երեկոյան Երեան, 05.02.1964):

մաշտոցաստեղծ, ամ., Մաշտոցի կողմից ստեղծված

Անհրաժեշտ է ոչ միայն գրառք կերպարանք փալ հնչյունային լեզուին, այլև գրութեան կանոնադր և միասնական համակարգ՝ ուղղագրութիւն մշակել առաջին հերթին հայերէն **մաշտոցաստեղծ** գրական լեզուի (Լևոն Խաչերեան)²¹:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե սրանք հազվադեպ բառեր են կամ դիպվածային կազմություններ, ուստի կարող են ևս փնտրվել նորաբանությունների բառարանում: Այս հարցը փակվում է, երբ փնտրում ենք, թե եիշյալ բառարանում **Մ** փառի փակ, օրինակ, ինչ բառեր են գտնվել (**մազնեղիկ, մածնադուլ, մահագեղ, մահախոսք, մահակալություն, մահակել, մահմեդական, մաղձաղթափում, մայրային, մայրասեր, մայրադաշտ** և այլն)²²:

Անդրադառնալով հայերենի ուղղագրական բառարաններին, հարկապես որ **Մեսրոպ** և **Մաշտոց** բաղադրիչներով կազմված բառերը խայտաբղետություն են դրսևորում մասնավորապես մեծապատիվ կամ փոքրապատիվ գրելու հարցում:

Իր ընդգրկած բառաքանակով հայերենի ուղղագրական ամենամեծ բառարանը (152 հազար բառ) մեզ հետաքրքրող բառերից ունի միայն **Մեսրոպյան**²³ (մեծապատիվ,

20 Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոց / Նայկական գրերի ու մատենագրության սկզբնավորումը, Երեան, 1962, էջ 49:

21 Լևոն Խաչերեան, Նայոց համագային մաշտոցեան համակարգում միասնական և միակերպ ուղղագրութեան պարմութիւնը (Ե.-Ի. դարեր), Լոս Անջելես, 1999, էջ 47:

22 Ս. Էլոյան, նշվ. բառարանը, էջ 325-327:

23 Ն. Խ. Բաքսեղյան, Նայերեն ուղղագրական-ուղղափոսական, փերմինաբանական բառարան, Երեան,

որը, ի դեպ, սկզբունք է ամբողջ բառարանի համար, ինչպես՝ *Մեղադր, Մեղադարան, Մեղադարենկոր* և այլն): Ուղղագրական մյուս՝ դպրոցական և ուսումնական բառարանները ներկայացնում են *Մեարոպ* բաղադրիչով մի բանի բառ միայն, հայաստանում այսօր ընդունված գրությամբ՝ փոքրատառ: Այսպես՝ *մեարոպարառ, մեարոպյան*²⁴, *մեարոպագիր, մեարոպարառ, մեարոպյան*²⁵:

Բավական անսկզբունք է ուղղագրական բառարաններից մեկի մոտեցումը բառերի ընկրության հարցում: Ներկայացվել են *մեարոպախոս, մեարոպաշունչ, մեարոպարառ* բառերը²⁶, որոնցից առաջին երկուսը հազվադեպ գործածություն ունեցող հեղինակային նորակազմություններ են: Մյուս կողմից, սակայն, բառարանում չկան բավական փարածված *մեարոպյան*-ը, *մաշրոցյան*-ը:

Մաշրոցյան - մաշրոցյան (մեծատառով և փոքրատառով) հակադրությունն է ներկայացնում ուղղագրական մասնավոր բառարաններից մեկը²⁷: Այսպես՝ *մաշրոցյան սյրուրեն* և *Մաշրոցյան Մարենադարան*: Տրվում են նաև *մեարոպյան սյրուրեն* և *Սահակ-Մեարոպյան թարգմանություն* բառակապակցությունները²⁸ (երկրորդի դեպքում հասկացվում է Սահակի և Մեարոպի թարգմանություն, որի պարզաբանություն էլ մեծատառ է):

Հայոց գրերի սրբոճողի անվան բաղադրիչներով կազմված բառեր չկան հայոց լեզվի հաճախականության բառարանի հիմնական ցանկում: Այդպիսիք հանդիպում են միայն 2-1 հաճախականություն ունեցող բառերի ցանկում²⁹: Դրանք են՝ *Մեարոպարառ, Մեարոպագուն, Մեարոպաշար, Մեարոպաշունչ, Մեարոպյան*³⁰ *սյրուրեն* (տրված է բառակապակցությամբ): Համոզիչ չէ, որ հաճախականությամբ մյուսներից էապես փարբերվող *մեարոպյան*-ը դրվել է իսկապես եզակի գործածությամբ հայերի *մեարոպագուն* և *մեարոպաշար* բառերի կողքին և չգիտես ինչո՞ւ բառակապակցությամբ: Համոզիչ չէ նաև, որ *մեարոպյան* բառը դուրս է մնացել հիմնական ցանկից, երբ այնպեղ կան *թարերգել, թարեայուն, թացախլթիլ-եթեր, թթախտր* և խիստ հազվադեպ նման այլ բառեր³¹:

Զարմանալի է, որ բառարանում չկա *մեարոպարառ* բառը, որ հաճախադեպ է (ոչ միայն գեղարվեստական խոսքում): Ենթադրում ենք, որ *մեարոպարառ* միավորը վրիպման հետևանքով է հայտնվել ցանկում³², և նրա փոխարեն պիտի լիներ *մեարոպա-*

1973, էջ 659:

24 Ա. Դարբյան, Գ. Շեկյան, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, 1981, էջ 161:

25 Ա. Մ. Մուրխայան, Ք. Ա. Մուրխայան, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Երևան, 2002, էջ 230:

26 Փ. Գ. Մեյթիսյան, Հայերենի ուղղագրական նոր բառարան, Երևան, 2005, էջ 282:

27 Դ. Գյուրջինյան, Մեծատառ, թե՛ փոքրատառ, Երևան, 2001, էջ 98:

28 Դ. Գյուրջինյան, իշվ. բառարանը, էջք 102, 120, այլև Դ. Գյուրջինյան, Հայերեն բառարան-փեղեկագր. միասին, անջատ, գծիկով գրվող բառեր, Երևան, 1998, էջ 75:

29 Բ. Գ. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Երևան, 1982, էջ 342:

30 Բառերը բառարանում տրված են այսպիսի գլխատառով գրությամբ, որ արդարացված չէ:

31 Բ. Գ. Ղազարյան, իշվ. բառարանը, էջ 263:

32 Այս բառի որևէ գործածություն կամ բառարանային գրանցում մեզ չի հանդիպել, այն չկա նաև ԱՐԵՒԱԿում, որը 110 միլիոն բառագործածություն է ամփոփում:

դասո-ը: Չնայած որ այդ դեպքում *մեարուսասրառ*-ը պիտի Կրեդալիտիլեր հիմնական բառացանկ, բանի որ համեմատաբար բարձր հաճախականություն ունի: Այսպես, օրինակ, մինչև 1980 թվականն ընկած ժամանակահատվածի համար (հաճախականության բառարանը լույս է տեսել 1982-ին) բառի գործածության այսպիսի նմուշներ կարող ենք բերել. Կորյունի այդ մարչանը մեր հնագույն մարենագրության ռսկեղեն գանձերից մեկն է՝ *մեարուսասրառ* հայ գրականության անդրանիկ ինքնուրույն սրեղծագործությունը (Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոցը որպես իր դարաշրջանի հանճարեղ արքայահայրից)³³, Քանի ցեղեր ցամաքեցին Ինչպես հեղեղն ավազի մեջ, Բայց լեռնիյան ծովին հասավ *մեարուսասրառ* հայոց լեզուն (Նաիրի Զալյան, Նայոց լեզուն), *Մեարուսասրառ* ոչ մի գրքում մարդն այնքան չի մերկացված, որքան այսօր (Պարույր Սևակ, Գրիգոր Նարեկացի)³⁴, Էջմիածինը հոգևոր-մշակութային առանձնակի վերելք է ապրել հաղկապես V դարում, երբ բուն գործունեություն ծավալեցին Սահակ Ա Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, որոնք հիմնադրեցին հայոց առաջին *մեարուսասրառ* դպրոցը (ՄՍՀ)³⁵, Յուրաքանչյուր անդամ պարտավոր է չգործածել *մեարուսասրառ* հայերենին խորթ բառեր (Պիոներ կանց, 16.02.1961), Գիտության և էլեկտրոնային հաշվիչ մեքենաների արտադրության բնագավառում Սովետական Նյախարանի նվաճումներին է նվիրված Վ. Մուրադյանի «Մարածող մեքենաներ *մեարուսասրառ* դրոշմանիշով» հոդվածը (Գրական թերթ, 06.08.1965), *Մեարուսասրառ* գրերը քեզ ողջունում են ամենուր՝ փողոցում, թաղամասում, թանգարաններում (Երեկոյան Երևան, 30.05.1964)³⁶ և այլն: Ի դեպ, հաճախականության բառարանի լույսընծայման ժամանակ արդեն հրապարակի վրա էին ակադեմիական և Էդ. Աղայանի բացատրական բառարանները, որոնք արձանագրել էին *մեարուսասրառ* բառը:

Մաշտոց բաղադրիչով կազմություններ չկան հաճախականության բառարանի և ոչ մի ցանկում:

Մեարուս բաղադրիչով կազմված բառերից երկուսը՝ *մեարուսասրառ* և *մեարուսյան*, տեսնում ենք հանգաբառարանում³⁷: Կրկին բացակայում է *մաշտոցյան* բառն այն դեպքում, երբ բառարանում գերեզված են *կարաիքյան, բազեդովյան, գլաուբերյան, զեյդերյան, սիլուրյան, բերդուկերյան, չուկուրյան, նեֆեկինյան, կարբույյան, անդամանյան, բորդյան, դեռնյան*, անգամ *վեզեպարյան, սպեցիֆիկյան* և *-յան* վերջածանցով նման այլ բառեր³⁸: Բոլորովին ընդունելի չի կարող լինել այն պարճառաբանությունը, թե դա պայմանավորված է հանգաբառարանի համար հիմք հանդիսացած բառարաններից *մաշտոցյան* բառի բացակայությամբ: Բառարանից օգտվողին ուղղված հակիրճ խոսքում վերջնական խմբագրում իրականացրած

33 «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1962, հ. 5, էջ 12:

34 Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 249:

35 ՄՍՀ Երևան, հ. 4, 1978, էջ 66:

36 Մամուլից բաղված օրինակներն ըստ ԱՐԵԲԱԳ-ի. www.eanc.net:

37 «Նայոց լեզվի հանգաբառարան», Երևան, 1976, էջք 340, 466:

38 Նշվ. բառարանը, էջ 338-341:

Պ. Պողոսյանը գրում է, որ բառացանկը համարվել է «ժամանակակից մամուլից, հայ գեղարվեստական գրականության առանձին երկերից, գիտական աշխատություններից ու դասագրքերից»³⁹ բաղված բառերով: Փաստ է, որ *մաշտոցյան* բառը չի ներառվել բառացանկ:

Մեսրոպ բաղադրիչով կազմված բառերից միայն երկուսն են գերազանցվել հայերենի բառակազմական բառարանում՝ *մեսրոպագիր, մեսրոպյան*⁴⁰: Թեպետ բառացանկից դուրս մնացած *մեսրոպաստու*-ն ավելի հաճախակի է, քան *մեսրոպագիր*-ը: *Մաշտոց* բաղադրիչով որևէ բառ ընդհանրապես չկա: Առհասարակ սպասելի էր, որ հայկական գրի ստեղծողի անվան բաղադրիչներով կազմված բառակազմական առանձին փնջեր լինեին ուսումնական այդ բառարանում: Նարեկապետ որ հրապարակի վրա եղած բառարաններն արդեն զգալի նյութ են ընձևում:

Անդրադառնալով այն տերմինաբանական բառարաններին, որոնք մեզ հեղափոխություն բառերից են պարունակում: *Մեսրոպյան* և *մաշտոցյան* ածականներով բաղադրված լեզվաբանական բառակապակցական մի շարք տերմիններ գրանցվել են գիտաճյուղի տերմինաբանական բառարանում՝ *մեսրոպյան այբուբեն, մեսրոպյան բառեր, մեսրոպյան երկաթագիր, մեսրոպյան լեզու, մեսրոպյան հայերեն, մեսրոպյան հնչում, մեսրոպյան փառեր, մաշտոցյան* բաղադրիչով՝ *մաշտոցյան լեզու* և *մաշտոցյան հայերեն*⁴¹:

Մաշտոցյան լեզու և *մաշտոցյան հայերեն* տերմինները, ինչպես և *մեսրոպյան լեզու*-ն, որևէ բացառություն չունեն. ուղիղ հղումներ են արվում *մեսրոպյան հայերեն* բառահոդվածին, *մեսրոպյան երկաթագիր*-ը՝ *երկաթագիր* բառահոդվածին: Մյուս դեպքերում տրվում է հայերեն տերմինը, ապա՝ նրա ժամանակակից թարգմանությունը, այնուհետև՝ համարժեք հայերեն տերմինները (երեկան), հակիրճ բացատրությունը: Այսպես:

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՅԵՐԵՆ//месроповский армянский язык:

Մաշտոցյան լեզու: Մաշտոցյան հայերեն: Մեսրոպյան լեզու:

V դարի սկզբից մինչև կեսերը (460) հայ ինքնուրույն ու թարգմանական գրականության լեզուն, որով գրված են Եզնիկի «Եղծ աղանդոց»-ը, Ագաթանգեղոսի «Պատմություն Նայոց»-ը, Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն և բազմաթիվ թարգմանական աշխատություններ, որոնց մեջ նշանավոր է Աստվածաշնչի թարգմանությունը

Մեսրոպյան հայերեն տերմինը երկարատև ժամանակահատվածում է դարձել *հեղամեսրոպյան հայերեն*⁴² և *նախամեսրոպյան հայերեն* տերմինների համար:

39 Նշվ. բառարանը, էջ 14:

40 Ս. Գալստյան, Դպրոցական բառակազմական բառարան, Երևան, 2011, էջ 139:

41 Ն. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարաբաղյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջք 214, 210:

42 Մեսրոպյան հայերեն և հեղամեսրոպյան հայերեն բառահոդվածներ կան նաև Ն. Զ. Պետրոսյանի «Նայերենագիրական բառարանում» (Երևան, 1987, էջ 465, 378): Ունենք նաև մեսրոպյան շրջանի հայերեն բառակապակցական տերմինը՝ որպես գլխաբառային (ՄՆ, Երևան, հ. 7, Երևան, 1981, էջ 472):

Մեսրոպյան հնչում Կերմինի կողքին լեզվաբանական բառարանում կարող էր նշվել նաև ավելի վաղ գործածված **մեսրոպյան արքաբերություն**⁴³ տարբերակը:

Ջաքմանայի է **Մեսրոպ** և **Մաշտոց** բաղադրիչ ունեցող հաճախադեպ երկու Կերմինների բացակայությունը բառարանից, ինչպես՝ **մեսրոպյան ուղղագրություն** և **մաշտոցյան ուղղագրություն**: Ի դեպ, այժմ բավական տարածված է **նախա-մաշտոցյան** Կերմինային բաղադրիչը **նախամաշտոցյան գիր / գրականություն** բառակապակցություններում:

Նիշապակելի են նաև հայագիտության մեջ գործածված **նախ-մեսրոպեան սյրուրեն**, **նախամեսրոպեան սյրուրեն**, ինչպես նաև ուղղագրական տարբերակներով հանդես եկող **միջինմեսրոպեան տառեր** և **միջին-մեսրոպեան տառեր** Կերմինները⁴⁴:

Բառարանում **Մեսրոպ** և **Մաշտոց** բաղադրիչներ ունեցող Կերմինների պարագայում սովորաբար չի նշվում Կերմինն առաջին անգամ գործածողի (կամ համեմատաբար վաղ գործածողի) անունը⁴⁵: Միայն մեկ բացառություն կա. **հեքամեսրոպյան հալերեն** Կերմինի դեպքում հիշատակվում է Նր. Աճառյանի անունը⁴⁶:

Ներառքբրական է **մեսրոպյան հայերեն** Կերմինի հարցը: Նր. Աճառյանն իր «Նայոց լեզվի պատմություն» աշխատության երկրորդ հատրթի ԺԶ. գլխում, որը հենց «Մեսրոպյան հայերեն» է կոչվում, գրում է. «Լեզվական հայտնի տարբերություններ տեսնում ենք այն հայերենի, որ Մեսրոպյան դպրոցի արքադպրությունն է կազմում, և այն հայերենի միջև, որ Մեսրոպի, Սահակի և նրանց անմիջական աշակերտների մասին հեկո գրի առնվեց: Առաջինը կոչում ենք մեսրոպյան հայերեն, որ տեսնում է Ե. դարի սկզբից մինչև կեսը (460 թ.), իսկ երկրորդը կոչվում է հեքին կամ հեքամեսրոպյան հայերեն, որ սկսվում է 461 թվականից և ունի զանազան շրջաններ»⁴⁷:

Մեսրոպյան հայերեն Կերմինը կապում են ականավոր հայագետ Նր. Աճառյանի անվան հետ: Վ. Առաքելյանն իր «Մեսրոպյան հայերենը» հոդվածում գրում է. «**Մեսրոպյան** անվանումը նոր է գրաբարի առաջին 50-60 տարվա շրջանի համար, որ ընդգրկում է 401 թվականից մինչև 460 թվականը: Ավանդաբար այդ շրջանի հայերենը կոչում են դասական կամ ռսկեդարյան հայերեն, որ մեզանում մեսրոպյան է կոչվել մեծ հայագետ Ն. Աճառյանի կողմից 1951 թվականին»⁴⁸: Ուշադրություն պիտի դարձնել

43 «Նանդե ամսօրեայ», 1900, հ. 1, էջ 14:

44 **Տ. Սիբուդյան**, «Նանդե ամսօրեայ» լեզվաբանական Կերմինները (1887-1920 թթ.), Երևան, 2010, էջ 138, 90:

45 Բառարանի Մեսրոպ-ով բաղադրված Կերմինների էջում այդ բանն արված ենք տեսնում ուրիշ Կերմինների պարագայում, ինչպես՝ մերձակա մակբայ (Անանուն), մերական (Եսայի Նչեցի), միաբար-բառ վանկեր (Ն. Կոստանդնուպոլսեցի), միագիր վանկ (Կ. Գալանոս), միաժամանակյա բառեր (Խ. Արովյան) (նշվ. բառարանը, էջ 214):

46 **Ն. Զ. Պերոպյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Դարագույան**, Լեզվաբանական բառարան, էջ 179:

47 **Նր. Աճառյան**, Նայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 76-77:

48 Նախկան ՍՍՏՂ- գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1962, հ. 5, էջ 14:

լեզվաբանի գործածած «մեզանում» բառի վրա, չնայած որ պրոֆեսորը միաժամանակ գրում է, թե **մեսրոպյան** անունը նոր է:

Վերապահության անհրաժեշտություն համենայն դեպս եղել է: Բանն այն է, որ շարքավերջի վաղ՝ քրիստոնեական առաջ, Վիեննայում լույս տեսնող «Նաղդես ամսօրեայ» գիտական պարբերականում գործածվել են փոխանցյալ հետևյալ բառակապակցությունները՝ **մեսրոպյան հայերէն** (1887, 9, 139), **մեսրոպյան լեզու** (1893, 3, 89), **նախնական մեսրոպյան լեզու** (1891, 12, 361), **հնագույն մեսրոպյան հարազատ լեզու** (1887, 9, 139)⁴⁹: Այս ճանապարհով կարելի է պարզել ինչպես փոխանցյալ լեզվաբանական ընդգրկումը, այնպես էլ առաջին գործածողի անունը: Օրինակ՝ **մաշպոտ լեզու** փոխանցյալ համար բառարանում կարելի էր հիշատակել Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ հ. Նովսեփ Գաթրոնյանի անունը⁵⁰ (այս հայագետին է պատկանում «դասական և ոչ դասական հայերենի հայրնագործման առաջնակարգ պարիվը»)⁵¹:

Մեսրոպ և **Մաշպոտ** բաղադրիչներով կազմված բառեր սովորաբար չեն հանդիպում թարգմանական բառարաններում: **Մեսրոպ** բաղադրիչով միայն երկու բառ՝ **մեսրոպապատ** և **մեսրոպյան**, արձանագրվել են հայ-ռուսերեն ակադեմիական բառարանում⁵²: Բառարանագիրներն այսպես են վարվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բառերը նաև լեզվամշակութային-ճանաչողական փոքր են պարունակում: Այսպես՝ **մեսրոպապատ** - написанный по-армянски, написанный армянскими буквами (по имени Месропа Маштоца, создателя армянского алфавита), **մեսրոպյան** - месроповский⁵³: Թարգմանական մյուս բառարանները նման օրինակներ չունեն:

Մեսրոպ և **Մաշպոտ** բաղադրիչները տեսնում ենք նաև մի քանի փոխանուններում, ըստ այդմ էլ՝ փոխանունների և հանրագիտական բառարաններում: **Մաշպոտ** անունը հանդիպում է հայտնի նյութաբանական հատուկ անուններում, ինչպես՝ **Մաշպոտի շրջան** (Երևանում, 20-րդ դարի 80-ական թվականներին), **Մաշպոտի պողոտա** և այլն⁵⁴, համադրական կազմություններ չկան:

Մեսրոպ բաղադրիչով են կազմվել համադրական կազմություն ունեցող փոխանուններ՝ **Մեսրոպավանք** (վանքի փոխում սկզբնապես գրվելիս է եղել Մ. Գրիգոր եկեղեցին: 5-րդ դարում վերակառուցվել է Մեսրոպ Մաշպոտի և Սյունիքի Շաբիթ իշխա-

49 Տ. Սիրունյան, նշվ. աշխ., էջ 84:

50 Յ. Գաթրոնյան, Մաշպոտյան լեզուն / Նաղդես ամսօրեայ, 1913, էջ 719-723 (հարված է անփափ մի աշխարհությունից, հրապարակվել է հետմահու. հայագետը վախճանվել է 1882-ին):

51 Էդ. Բ. Աղայան, Նայ լեզվաբանության պարմություն (սկզբից մինչև մեր օրերը), հ. 1, Երևան, 1958, էջ 248:

52 «Հայ-ռուսերեն բառարան», Երևան, 1984, էջ 491:

53 Անդ:

54 Ներառյալ Վանի և **Մաշպոտներ** լեռնանունը, որը սուրբ Մեսրոպի անվանը չի կապվում: Բարձրները գրվում է Մեանա լճի արևմտյան ափին՝ Մեանի կղզու դիմաց: Լեռան գագաթին **Մաշպոտ** վարդապետը՝ Մեանի վանքի հիմնադիրը, 862 թ. կառուցել է մարտու և ճգնել այնտեղ:

նի ջանքերով, որի պարծառով էլ վանքը հեղափոխություն կոչվել է **Մեսրոպավանք**)⁵⁵ և **Մեսրոպավան** (գյուղ և գետ): Կան նաև վերլուծական կազմություններ՝ **Ս. Մեսրոպի վանք** (գտնվել է Մաշտոցի ծննդավայր Նացիկ գյուղի մոտ, ենթադրվում է, որ Մաշտոցը թաղված է եղել իր հայրենի գյուղում, ապա տեղափոխվել է Օշական), **Ս. Մեսրոպասյր** (ուխարարելի Արևմտյան Նայասարանում՝ Բալու գյուղաքաղաքի մոտակայքում, վիճակոթ քարայր-սենյակներ են, որոնցից մեկում, ըստ ավանդության, իբր Մաշտոցի գերեզմանն է), **Մեսրոպյան բերդ** (այս բերդի հյուսիսային կողմում են գտնվում Ս. Մեսրոպի վանքը և Ս. Մեսրոպի այրը)⁵⁶:

Մեսրոպյան բառով կազմված բառակապակցական տերմիններին ու տեղանուններին պիտի ավելացնել որոշ բաղադրյալ անվանումներ, որոնք հանրագիտական բառարանների գլխաբանք են դարձել, ինչպես՝ **Մեսրոպյան դպրոցներ** (**Մեսրոպյան վարժարաններ**) (V դարի Նայասարանում Մեսրոպ Մաշտոցի հիմնադրած հայկական դպրոցները), **Մեսրոպյան ընկերություններ** (տարբեր ժամանակ Կ. Պոլսում և այլուր գործած կրթական-լուսավորական կազմակերպություններ), այլև **Մեսրոպյան վարժարան** (Զմյուռնիայում, հիմնվել է 1799-ին հայ համայնքի նվիրավորություններով)⁵⁷:

Մինչ այժմ ներկայացրինք, թե **Մեսրոպ** և **Մաշտոց** բաղադրիչներով կազմված ո՞ր բառերն ինչպե՞ս են ներկայացված հայերենի տարբեր բառարաններում: Նախ է անդրադառնալ նաև այն դեպքերին, երբ այդ բառերը չեն գտնվել համապատասխան բառարաններում:

Քննարկվող բառերից ոչ մեկը չենք գտնում հայոց լեզվի հոմանիշների ամենաընդարձակ բառարանում⁵⁸: Չկա սլոնիկ **մեսրոպյան - մաշտոցյան** հոմանշային զույգը: Նույն ձևով բացակայում են **մեսրոպագիտություն - մաշտոցագիտություն**, **մեսրոպասպեղծ - մաշտոցասպեղծ** հոմանշային զույգերը: Սլոնիկի էր նաև բավական հաճախական **մեսրոպասպառ** բառը, որ պետք է դրվեր **հայասպառ** բառի դիմաց: Այսպես, սակայն, միայն գրված է «տե՛ս **հայագիր**», որն էլ պարզապես բացառվում է «հայոց գրերով գրված»⁵⁹: Այնինչ այսպես էլ կարող էր լինել **մեսրոպագիր**ը:

Այժմ գեղարվեստական, հրապարակախոսական և գիտական խոսքում հանդիպում են **Մեսրոպ Մաշտոց** անվան բաղադրիչներով կազմված բազմաթիվ բառեր, որոնք չեն արձանագրվել հայերեն որևէ բառարանում: Դրանցից են արևելահայ և արևմտահայ «տարածքներում» կազմված հետևյալ բառերը՝ **մաշտոցաբար, մաշտոցագիտություն, մաշտոցագիտական, մաշտոցադիր, մաշտոցական, մաշտոցահիմն, մաշտոցասպարում, մաշտոցասպեղծ, մեսրոպագիտություն**,

55 Վանքը գտնվում է Մեծ Նալբի Վասպուրական աշխարհի Գողթն գավառում՝ **Մեսրոպավան** / Մարվանիս գյուղում: (Թ. Խ. Նախոբյան, Սրբ. Կ. Մելիք-Բախշյան, Ն. Խ. Բարսեղյան, Նայասարանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 799):

56 Թ. Խ. Նախոբյան, Սրբ. Կ. Մելիք-Բախշյան, Ն. Խ. Բարսեղյան, նշվ. բառարանը, էջ 798, 799:

57 ՍՄ, հ. 7, էջ 472:

58 Ա. Մ. Սուքիասյան, Նալբի լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2003:

59 Ա. Մ. Սուքիասյան, նշվ. բառարանը, էջ 581-582:

մեսրոպագիտական, մեսրոպադրոշմ, մեսրոպական, մեսրոպակերպ, մեսրոպավանդ, մեսրոպերզակ և այլն: Մրանք կարող են լինել գրքերի, հոմանիշների, բացարձակ, բառակազմական, ինչպես նաև տերմինաբանական բառարաններում:

Անավանդ ընդգրկվում են բանի օրինակներ.

Նրա խոսքերով՝ «թեմը ողողված է նշանավոր վանքերով, եկեղեցիներով ու սրբափայլ ինքերով...», որոնք անգնահատելի հարստություններ են, մեր **մեսրոպադրոշմ** ինքնության արժանապատվություններ («Ազգ», 06.01.2003):

Սուրբն ի նման Լուսաուրջի

ՈՒ հանճարներ **մեսրոպափայլ...** (Ժագ Նակոբյան, Նոր գինանշան)

Մաշտոցահիմն դպրոցներում քերականությունը առաջին առարկաներից էր, որ դասավանդում էին (Ա. Ս. Մաթևոսյան, Մովսես Խորենացին և Աթանաս Տարսնացու ժամանակագրությունը)⁶⁰:

Զեկուցումները նվիրված էին Մաշտոցյան շրջանի հայերենի հնչյունական համակարգին, **Մաշտոցագիտական** ուսումնասիրություններին: («Լճմիածին» հանդես, 2005, Թ, էջ 121):

Այսպիսով՝ կարելի է հետևյալ եզրակացություններն անել:

1. **Մեսրոպ Մաշտոց** անվան բաղադրիչներով կազմված բառերից բառարանային գրանցում առաջինն ունեցել է **մեսրոպեան** ածականը:

2. **Մեսրոպ Մաշտոց** անվան բաղադրիչներով կազմված բառեր գրանցվել (և բառարանային մշակման են ենթարկվել) են բացարձակ, ընդհանուր և մասնավոր ուղղագրական, գրողի (հեղինակային), հաճախականության, նորաբանությունների, հարույժ անունների, բառակազմական, լեզվաբանական բառարաններում և հանգաբառարանում: Այդպիսիք սովորաբար չեն հանդիպում թարգմանական բառարաններում (բացառություն է հայ-թուսերեն ակադեմիական բառարանը՝ **մեսրոպասարա** և **մեսրոպյան**):

3. Նայերենի բացարձակ ընդարձակ բառարաններում գրանցվել են **Մեսրոպ** բաղադրիչով հետևյալ բառերը՝ **մեսրոպյան, մեսրոպագիր, մեսրոպանիշ, մեսրոպաշունչ, մեսրոպասարա**, դրանցում **Մաշտոց** բաղադրիչով բառեր չեն արձանագրվել:

4. Նայերենի փաթեթեր տեսակի բառարաններում արձանագրվել են **Մեսրոպ Մաշտոց** անվան բաղադրիչներով կազմված բառերի մի մասը միայն: Դրանք են (ներկայացնում ենք այբբենական կարգով)՝

ա) **Մեսրոպ** բաղադրիչով՝ **մեսրոպասարա, մեսրոպասարաբառ, մեսրոպաբույր, մեսրոպագիծ, մեսրոպագիր, մեսրոպագուն, մեսրոպախոս, մեսրոպածին, մեսրոպահեղ, մեսրոպահյուս, մեսրոպահունչ, մեսրոպանիշ, մեսրո-**

60 «Պարմա-բանասիրական հանդես», 1989, հ. 1, էջ 228:

պանման, մեսրոպանուն, մեսրոպաշար, մեսրոպաշունչ, մեսրոպասնունդ, մեսրոպասպեղծ, մեսրոպասպառ, մեսրոպյան,

բ) *Մաշտոց* բաղադրիչով՝ *մաշտոցաշունչ, մաշտոցյան, Մաշտոցյանք:*

5. Բառարանային մշակման են ենթարկվել նաև *Մեսրոպ Մաշտոց* անվան բաղադրիչներով կազմված համադրական և վերլուծական կազմություն ունեցող արեղանունները (*Մեսրոպավանք, Մեսրոպավան, Մեսրոպյան բերդ, Ս. Մեսրոպա այր*), լեզվաբանական բառակապակցական արմինները (*ՄԵՍՐՈՊՅԱՆ այրուբեն, բառեր, երկաթագիր, լեզու, հնչում, տառեր, ՄԱՇՏՈՅՅԱՆ լեզու, հայերեն*):

6. *Մեսրոպ Մաշտոց* անվան բաղադրիչներով կազմված բառեր չեն գրանցվել հոմանիշների բառարաններում:

7. Բառարանային գրանցում դեռևս չունեն *Մեսրոպ Մաշտոց* անվան բաղադրիչներով կազմված փասնյակ բառեր, ինչպիսիք են՝

ա) *Մեսրոպ* բաղադրիչով՝ *մեսրոպագիրական, մեսրոպագիրություն, մեսրոպադրոշմ, մեսրոպական, մեսրոպակերպ, մեսրոպաձայն, մեսրոպավանդ, մեսրոպերգակ* և այլն,

բ) *Մաշտոց* բաղադրիչով՝ *մաշտոցաբար, մաշտոցագիրական, մաշտոցագիրություն, մաշտոցադիր, մաշտոցական, մաշտոցահիմն, մաշտոցասպարում, մաշտոցասպեղծ* և այլն: Դրանք կարող են համալրել հայերեն տարբեր փասակի բառարանների բառացանկը: